

եւ հզօր աջով սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ
եւ սրբոյն Յակոբայ Մծբնայ սքանչելագործ Հայ-
րապետին եւ այլոց սրբոցն՝ որք կան ի սուրբ Աթոռս
ի պահպանութիւն ամենայն հաւատացեալ քրիս-
տոնէից։ Որ եւ օրհնեալ ձեռնադրեցի զսիրելի որ-
դին մեր զՏէր Մեսրօպ վարդապետն ի սուրբ Աթոռն
բարձր իշխանութեամբ եւ տօնախմբութեամբ եւ
հանդիսաւոր ուրախութեամբ ի հանգիսի, ամէն։
Յաղագս որոյ ետու ցուպ եւ գաւազան պատուոյ եւ
մատանի առ հաւատչեայ հաւատարիմ եւ մնայ
զգուշութեամբ աստուածային փեսայութեան սրբ-
բաղան Եկեղեցւոյ ճշմարիտ հաւատով եւ ուղղա-
փառ դաւանութեամբ միշտ, ամէն։ Նոյնպէս եւ
զԱւետարանն տուեալ շնորհեցի, զի գնացեալ քա-
րողեսցէ ընդ ոլորտս տիեզերաց ամենայն հայկա-
զուն սեռից ըստ տերունական հրամանին թէ ամե-
նայն որ հարցի ի վէմս այս՝ փշրեսցի, եւ յոր վե-
րայ անկցի՝ հոսեսցէ զնա ամէն։ Այլ եւ ետու
հրաման եւ իշխանութիւն գործ եպիսկոպոսութեան
կատարելոյ ղայտոսիկ, այսինքն խաչ, թէ եկեղեցի
օրհնել, թէ սարկաւազ օրհնել, թէ գպիր օրհնել
եւ թէ քահանայ օրհնել եւ ամենայն կարգ եւ
սահման եպիսկոպոսութեան։ Տուեալ շնորհեցի
հրաման հոգեւոր որդւոյ իմոյ Տէր Մեսրօպ վարդա-
պետի եւ Եպիսկոպոսի, ոչ ոք ունի իշխանութիւն
դմա հակառակել թէ ի մերոց եւ թէ յօտարաց։
Ապաեալն ի սմանէ ի վերայ երկրի, եղիցի կապեալ
յերկինս, եւ արձակեալն՝ եղիցի արձակեալ յեր-
կինս, ըստ տերունական հրամանին, անիծեալքն ի
սմանէ՝ եղիցին անիծեալ, եւ ամենայն հակառա-
կորդքն գորա մեզ եւ սուրբ Աթոռոյն եւ սրբոյ Լու-
սաւորչի է հակառակ, եւ դմա հնազանդեալքն՝ մեզ
եւ սուրբ Աթոռոյն են հնազանդ ըստ տերունական
ձայնին որ ասէ, որ ձեզ լսէ, ինձ լսէ, եւ որ անարգէ
զձեզ, զիս անարգէ, որ ձեզ ընդունի եւ զառա-
քիչն իմ ընդունի. եւ թէ որ ոք արբուցէ ձեզ